

**ԱՐՑԱՒԻ ՀԱԿԱՌԱԿԱՔԵՐՂ ՏԵՂԱՆՔԸ, ԱՆՎԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՆ ՈՒ
ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Սիլվա Մինասյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԱրՊՀ

Հակառակաբերդ տեղանունը ամրոց/բերդ ու լեռնաշղթա է գիտակցվում, իսկ հնացած անվամբ՝ նաև Չափար գյուղը: Այդ անվամբ բերդը Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Տրտուի վերին հոսանքի մոտվամերձ ու ձախափնյա Պղտորագետ վտակի ենթավտակ Ակնաջրի ակունքի վերին մասն է: Հակառակաբերդը Մոռվի Արիություն գագաթնակետի արևմտյան մասից դեպի Տրտուն ձգվող նույնանուն լեռնաշղթայի վերջին վեհանիստ գագաթն է, ինչպես նաև արդի Չափար բնակավայրի հին ու նոր թաղամասերի արևմտյան կողմով վեր խոյացող բարձունքը: Չափար ու Հակառակաբերդ տեղանունները երբեմն գործածվում էին ու են փոխադարձաբար: Մեր նպատակն է պարզաբանել խնդրո առարկա տեղանքի՝ բնակատեղի, սրբավայր, բերդ-ամրոց լինելը, անվան տարբերակներ ունենալու իրողությունները և նրանց ստուգաբանությունը:

*Հակառակաբերդը՝ որպես ամրոց, անհիշելի ժամանակներից դժվարամատույց, անտառածածկ ու հեռվից անտեսանելի է: Այն պատմական Ըռստակի, այնուհետև Ջրաբերդի ամրակուռ բերդերից էր: Նրա մասին գրավոր ծավալուն նկարագրություն և ուսումնասիրություն առ այսօր հրապարակի վրա չկա: Հանրածանոթը Ս. Բարխուդարյանի *Արցախ* գրքում է. «Գտնուում է Դատի վանքից վերև, մի թրածև և անտառապատ սարի վերայ: Բերդս ունի ամուր դիրք, հիանալի տեսարան և նշանաւոր ջուր: Մի քարուկիր և մեծ ջրամբար է՝ լի կենդանի ջրով, որ ո՛չ պակասում, ո՛չ ջուր է ընդունում, և ո՛չ արտահանում: Բոլորովին անջրպետուած է բերդասարս իւր չորս կողմերից խորանդունդ և լայնգոգ ձորերով. միայն ունի մի թելուղի, որ մի սեռի գլխով բարձրանում է դեպի բերդն: Ամրոցիս մէջ տեղ երևում են հին շինութեանց հետքեր», ու տողատակին ավելացնում. «Անունս (Հակառակաբերդ անունը՝ - Ս. Մ.) կայ Դատի վանուց արձանագրութեանց մէջ, այժմ կոչում են *Չափարի բերդ*»¹: Հակառակաբերդի վերաբերյալ մասնագիտական բառարանում հետևյալն է նշված. «Բերդ Մեծ Հայքի Արցախ աշխարհի Բերդածոր գավառում, Հաթերքի գավառակում: Գտնվում է Դադի վանքից վերև, Չափար գյուղի մոտ, անտառապատ թրածև լեռան վրա: Դիրքը գեղեցիկ*

¹ *Բարխուդարյան Ս., Արցախ, Բագու, 1895 թ.՝ վերահրատարակություն, Ստեփանակերտ-Երևան, 1995, էջ136*

է ու անմատույց, ունի առաջնակարգ ջուր: Այժմ ավերակների հետքերը հազիվ են նշմարվում: Այստեղ կա քարուկրով կառուցված մի մեծ ջրամբար, որն այժմ ևս լիքն է լինում ջրով: Բերդը չորս կողմից անջրպետված է անդնդախոր ձորերով, որտեղից բերդակիր ժայռի կատարը կարելի է բարձրանալ մի նեղ կածանով: Վաղեմի բերդի հնավայրն այժմ տեղացիները կոչում են Չափար գյուղի անունով: Թե երբ և ով է կառուցել, հայտնի չէ»¹: Նախ նշենք, որ երկու մեջբերումներում էլ ընդգծված առաջին կապակցությունը՝ *Դադի վանքից վերը*՝ որպես աշխարհագրական դիրք, անընկալելի է: Դադի վանքից վերը տվյալ վանքային համալիրի ձորն ի վեր դեպի լեռան գագաթն է, որտեղ Հակառակաբերդ չկա²: Այդ վերը նաև Տրտուի՝ Թարթառի հոսանքն *ի վերը* կարելի է հասկանալ, մինչդեռ Հակառակաբերդը *վար* է³: Հետո՝ երկրորդ ընդգծումներում տեսնում ենք, որ Ս. Բարխուդարյանը *բերդասարն* է անջրպետված համարում, իսկ բառարանում՝ *բերդը*, և վերջինիս արտաքին նկարագրությունը ճիշտ չի ստացվում: Հակառակաբերդի տեղանքը ճիշտ չի գծագրված նաև *Կողլաժ* հրատարակչության լույս ընծայած քարտեզում⁴: Այն լայնձի տեղադրված է պատմական Քրահունջի// Գյեռավանդի և Կվենքի// Երե Քղբտեղի// Փիրփայայի// Սև քաղաքի տեղանքներում Պղտորագետի// Գյարաքի ափերին⁵:

Հակառակաբերդն իր շրջապատում բնական դիրքով էլ է համապատասխանում անվանը, այն է՝ որպես բերդ, ամեն կողմով հարմար է դիմակայելու, հակառակելու թշնամուն: Շրջակայքում ունի կիրճեր, կապաններ, անդնդախոր ձորեր, որոնց հարմար տեղերում տարբեր ժամանակներում մարդիկ կառուցել են այլ բերդակներ (Բերդաքար//Սալդաշ), դարպասներ (Ջրի կապը, Բերդաքարի կապը, Ստուպկեն կապը) ու այլ շինություններ (հատկապես՝ Ս. Մինաս, Ս. Պողոս, Դարձ//Թարսխաչ) և այլն, որտեղ սպառվում էին թշնամու ուժերը⁶:

¹ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Եր., 1991, էջ 312:

² Այդ ձորը հաջորդում է Դադիվանքի լեռնաշղթային. լեռնաշղթաների անունները նոր են գործածվում: տես. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ատլաս, Եր., 2009:

³ Երևի մի բնագրի վրիպակ թյուրիմացորեն դարձված է վար պիտի լիներ, իսկ եթե բարձրությունը նկատի ունենալիս լինեն, այսինքն՝ Դադի վանքից բարձրադիր է, ապա իրարից հեռու գտնվող երկու լեռնաշղթաների տարբեր կարգի շինություններն այդպես չեն համեմատվի:

⁴ Բեգլարյան Գ., Արցախի քարտեզ (նախագիծը Ա. Մուրադյանի, ձևավորումը Ա. Ծերմակյանի), Կողլաժ հրատրվչ., Եր., 2004:

⁵ Ընդգրկված է նաև նշված քաղաքատեղի հիմնահատակ ավերված բերդը. երևի ոչ մեկը տեղանքին լավ ծանոթ չէր:

⁶ Հակաբաղադրիչով այլ տեղանքներ ևս կան հայերենում, ինչպես՝ Հվեղանը՝ Տրտուի աջափնյա՝ Վաղուհասի, Հարությունագոմերի, Կճողոտի, Առաջածորի և այլնի պաշտպանական ամրոցը, Հակառակահողեր՝ Լոռիում և այլն, որոնք, բացի աշխարհագրական դիրքից, նաև իրենց գործունեությամբ հակառակվելու, թարսվելու, ընդդիմանալու հատկանիշներ են ցուցաբերել հավատի, կառավարման բնագավառում՝ ձգտելով ինքնուրույնության ու ինքնիշխանության, որից կենտրոնախույս ուժեր դառնալով, նաև վնասել էին կենտրոնաձիգ պետականությանը:

Հակառակաբերողը ոչ միայն հուսալի ամրոց էր շրջակա տասը բնակավայրերի (Մանանասար, Երե ճղցնե, Երե Քղքատեղը, Գետամեջերը, Քրահունջը, Ներքե Շենատեղը, Ներքե, Երե Մշիաններ, Հինաս, Ներքե Քղքատեղ) մեծատունների ծերերի, կանանց ու երեխաների համար, այլ նաև հին դիցալին պաշտամունքի տեղ է եղել (Աստղիկ, Ծովինար): Բերդամիջի հարթությունում պահպանված ժայռակտորը հազարամյակներ առաջ զոհարան՝ զոհասեղան է եղել, որի վրա դրվել էր մատուցված մատաղ-զոհընծան¹: *Ձոհ* բառը պահլավական փոխառություն է պարսկերենի միջնորդությամբ և հայերենում նշանակում է *ողջակեզ, մատաղ, ընծա*, իսկ միջնորդ լեզվում ժողովրդական ընկալմամբ՝ *օրհնյալ ջուր*², որը հենց հյուսիսարևմտյան կողմի ջրամբարի պարունակությունն է, իսկ հնդեվրոպական նախալեզվում *զոհ/ր* բառի նախատիպը *զհեու* արմատն է, որից հայերենում ունենք բնիկ *ձոհ, ձև* բառերը³: *Ձոներ*, բնական է, եղել են Աստղիկին, Ծովինարին նվիրված, որից հիմա միայն *անձրև խնդրելիս* ժողովրդական մտածողությամբ պարզ ու մատչելի աղաչանքներն են ու նրանցում Շարմաղ աղջկա՝ Աստղիկի գեղեցկությունը փառաբանող մի երկու մակդիր: Քրիստոնեության ընդունումից հետո դադարեցվել է կուռքերի պահպանությունն ու պաշտամունքը: Այս բառը՝ *պաշտել*՝ իրանական փոխառություն է և նշանակում էր *շուրջը պտտվել*, դրանից են նաև *պաշտոն, ամբարիշտ* և այլ բառեր ձևավորվել⁴: Կուռքերի փոխարեն խաչքարեր են դրվել, Մարիամ Աստվածածին են կանչել, բայց մարդկանց անհրաժեշտն ու օգտակարը, բնական է, բանահյուսական ծեսի փշրանքների տեսքով մնացել են: Դրանցից էր *ջուր, անձրև խնդրելու* արարողությունը գյուղի հին թաղամասում ապրելու ժամանակ՝ մինչև 20-րդ դ. 60-ականները, երբ չռոզավոլ բանջարանոցները շատ էին (հատկապես եգիպտացորենի, կարտոֆիլի, ոչ ծիլավոր լոբու՝ փյաղա լոբու// տփլոբու տեսակներն անձրևներով բավարարվում էին): Անձրևները սակավ լինելու դեպքում դիմում էին այդ խնդրանքի արարողությանը: Կատարողները միայն իգական սեռի հասուն ներկայացուցիչներն էին: Խլղավոր ու քոփիով կանայք, մի արորի լծված, ոտաբոբիկ, աղբյուրի նովի ջուրը վարում էին ու Շարմաղ աղջկանից *անձրև՝ թոռնը*, հայցում, աղաչում: Մի կույս աղջկա ուղարկում էին Հակառակաբերդի ավազանի սուրբ ջուրը շարժելու՝ խառնելու:

¹ Նախորդ դարում էլ դեռևս մատաղ անելիս՝ պտտվում էին ժայռի շուրջը ու մորթված կենդանու կանթ թռչունի ոտքերը, զլուխը դնում այդ ժայռի վրայի փոքր ու կոտրված խաչքարի առաջ. Արցախյան գոյապայքարի ժամանակ Բերդի ժայռի արևմտյան ստորոտից բերված մեծ խաչքարով են փոխարինել այդ խաչքարակտորը:

² Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, վերահր., հ. 2, եր., 1972, էջ 103:

³ Նույն տեղը, տես նաև՝ Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, վերահր., հ. 3, եր., 1977, էջ 161-162:

⁴ Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, վերահր., հ. 4, եր., 1979, էջ 23-24:

Հնագույն ժամանակներից կառուցված այս Բերդի նպատակն իր մեջ գանձերի պահպանությունն ու երեխաներ, կանայք և ծերեր պատսպարելն էր անագորույն թշնամուց: Այն կառուցվել է ի պատիվ Աստղիկ դիցուհու¹:

Բերդը նաև *Հայկաբերդ* են կոչել, որն իբր Հակառակաբերդից կամ Չափարի բերդից առաջ եղած անունն է (Հայկ անունը Չափարում շատ հարգի էր ու է, բայց դա Հայկ Նահապետի անվան հետ է կապվում): Քանի որ ավանդություններում Հայկ նահապետը Մռով սարն է գիտակցվում, ուստի բնական է, որ այդ անվամբ բերդը ժայռանիստ Մռովի փեշին է, և ոչ թե քննարկվող բերդը: Հակառակաբերդը ժողովրդի կողմից շատ հիշվող *Շարմաղ աղջկա* տեղն է, այսինքն՝ աննման գեղեցկություն ունեցող Աստղիկ դիցուհի սրբատեղին է՝ վերածված բերդի: Պարկեշտ ու հավատացյալ չափարցիք, քրիստոնեության ընդունումից հետո, Աստղիկի, Ծովինարի անուն չեն տվել: Խուսափել են կռապաշտությունից ու շրջասությանը *Շարմաղ աղջիկ* կոչել: *Շարմաղ՝ ամենաչքնաղ, քնքուշ*² աղջիկը հայ իրականությունում Աստղիկն է ընկալվել: Հակառակաբերդից հարավ՝ Ս. Մինասի գոգի Ծովատեղում էլ Ծովինարի սուրբ աղբյուրն է եղել, որ հիմա *Գյուեն ձոր* է կոչվում: Քրիստոնեության ընդունումից հետո այն *Ս. Մինասի աղբյուր* է կոչվել և հին Թաղանանց, իսկ հիմա՝ Աղլութալայի ու Պլպլանի առուն կազմելով՝ Մեծ տնջրու՝ սոսու նոտ թափվում է Տրտուն³: Հակառակաբերդի հյուսիսարևելյան կողմում ալիքվող նոր բլրալանջին Մարիամ Աստվածածնի մատուռի տեղում էլ Անահիտ դիցուհու՝ մայրության աստվածուհու սրբատեղին է եղել (սրանից քիչ ցածի սարավանդի հյուսիսային, արևելյան տարածքները սրբերի գերեզմանոցը, վանքային համալիրն էր՝ Մայրավանք, իսկ հարավային լեզվակի ցցվածքը՝ փոքր ժայռով, Ս. Պողոսի ճգնարանն է. հեթանոսականը լրիվ քրիստոնեությամբ է փոխարկվել): Հակառակաբերդը նաև իշխանանիստ Հաթերքի գանձատունն է եղել միջին դարերում, հատկապես *վախթանգյան* շրջանում: Մինչև արցախյան մեղիքական վարչակարգը՝ Հակառակաբերդում աշխատանքային եռուզեռով նիստուկաց է եղել (փոքր զորապահակային գաղտնապահ խմբի պարտադիր աշխատանքը միշտ եղել է): Շահաբասյան հայաթափումից հետո դադարել են Հակառակաբերդի իշխանական ներքին փառքն ու հավատը: Այնուհետև

¹ Ըստ ավանդության Տրտունի հակադիր բարձունքին՝ առավել վեր, Վահագնի դիցարանն է, որը, Հայր աստծո՝ Մռովի ուղարկած պատիժ կարկուտը, կայծակով մտրակելով, իր կողմն է տանում՝ Աստղիկին փրկելով տույժից ու էլի, ըստ նույն ավանդության, այդտեղ միշտ եղել է Աստղիկի մեղմ իրավիճակում գտնվող սրբազան լոգարանը, եթե խաթարվի անդորդը, այսինքն՝ Աստղիկը մեջը լողանա, անձրև կթափվի, որպեսզի մարդկային սովորական աչքերից վարագուրի նրա աստվածակերտ գեղեցկությունը:

² Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, 3 հ., Եր., 1944, էջ 507:

³ Հիմա շատ բարակ առու է, որովհետև աղբյուրների ջրերը խողովակներով տեղափոխված են Գետավան:

պատերազմական իրավիճակներում հասարակ մարդկանց համար երբեմն պաշտպանական արժեք է ունեցել ու մի քանի անգամ մասնակիորեն ավերվել՝ անընդհատ սակավ կարողություններով ու նվազող ամրություններով վերականգնվել: **Հակառակաբերորդ Չափարի մարդկանց համար ուղղակի հույս, հավատ, ուժ ներշնչող է եղել ու, մինչև արդի հեռահար հրետանակոծությունն ու ռմբակոծությունը, վստահելի ապաստարան լինելու ապավեն է ծառայել: Նրա գերբնական զորությունը, վեհությունը, վաղեմի փառքն ու պարծանքն առ այսօր ժողովրդի հավատալիքներից չի ջնջվում:** Հակառակաբերորդի լեռնաշղթան ունի տարբեր ուղղություններով ձգվող և տարբեր ձևերով վերջավորվող բազմաթիվ ենթաբազուկներ: Հակառակաբերորդ լեռնաշղթայի՝ ամրոց կրող հատվածի լեռնալանջային ամենամեծ ու լայնշի տարածքն արևելքն է, որտեղ և Չափար բնակավայրն է: Նշված տարածքի բարձր գագաթնակետ ժայռին նույնանուն ու դժվարամատույց ամրոցը, ինչպես նշեցինք, Աստղիկ դիցուհու՝ Շարմաղ աղջկա բերդն է՝ իր առեղծվածային ու կախարդական ջրամբարով, զոհարան-մատաղատեղի ժայռակտորով: Քրիստոնեությունից առաջ զոհասեղանի դեր է կատարել այն՝ դիցուհու արձանի պատվանդան լինելով հանդերձ, իսկ քրիստոնեությունից հետո խաչքար է տեղադրվել այդ մեծ ժայռակտորի վրա: Խորհրդային կարգերում խաչքարից մի փշրանք էր մնացել: Արցախյան գոյապայքարի ժամանակ, ինչպես նշվեց, կատարյալ խաչքարով փոխարկվեց (նկ. 1):



Հակառակաբերորդ ամրոցի կալաչափից քիչ փոքր հարթության մեջտեղում բնական այդ մեծ ժայռակտորը պահպանվել է նույնությամբ: Ժայռի տակից գաղտնուղի է ձգվել արևմտյան կողմի անտառածածկ, ժայռոտ խորխորատի Մթնաձորի՝ Մեծ դուզեի ուղղությամբ, որն առ այսօր ուսումնասիրված չէ: Կես դար առաջ ժայռի տակի բացվածքը դեռևս տեսանելի էր: Այն հիմա հողով լցված է: Ժայռից այն կողմ՝ հյուսիսային մասի վիմահերձ ժայռի վրա ջրամբարն է կառուցված: Հինգ կողմից կորավուն անկյուններով

սովորական բարակ հաստությամբ պատ է՝ ներսից անուր սվաղված: Այդ ջրամբարը դպրոցական տարբեր շրջանի երիտասարդներ բազմաթիվ անգամ դատարկել են, բայց գոգանման հատակից աննկատելի ձևով պարզ, սառնորակ ու քաղցրահամ ջուր է նորից աննկատ ավելացել և մի քանի օրում նույն մակարդակի վրա կանգնել¹: Շ. Սկրտչյանը ջրամբարը կալաչափ է համարում², բայց այդպես չէ: Այն քիչ կորավուն մի նեղ խուցի նմանվող սենյակի չափ է, որի հարավարևելյան մասը՝ որպես դուռ, բաց է, բայց արևի շողերը տարվա մեջ հազվագյուտ են դիպչում ջրի մակերեսին՝ կախարդական խաղեր ցուցլացնելով պատերին: Ջրամբարի հյուսիսային պատի մոտից մի նեղ աստիճաններով սանդուղք, որը հիմա համարյա քանդված է, բարձրանում է ժայռի այդ հյուսիսային ծայրի պնդապարիսպ կառուցված խորանարդաձև փոսով փոքրիկ դիտարան աշտարակը: Այն վերջին անգամ վերանորոգվել է 20-րդ դ. 18-20-ականներին՝ վերականգնելով բերդապարիսպն ու դարպասը³: Բերդը վերակառուցելիս նոր բարակ կաղնե տախտակից շուտափույթ դարպաս պատրաստելով՝ տեղադրել են հարավային հնագույն տեղում, կամարի տակ՝ մինչև վերին ծայրը բռնցքաչափ քարերով լցնելով, որպեսզի, ըստ անհրաժեշտության, գործածեն⁴: Գաղտնամուտքը հյուսիսային աշտարակից էր. չվանով իջեցրել կամ բարձրացրել են յուրայիններին (ստորերկրյա գաղտնամուտքը չի գործածվել): Այդ կողմում վերջացող ժայռի մասին ամրակուռ պարիսպ էր դրված, որի մի մասը կես դար առաջ հենց չափարցիներն են պայթեցրել՝ հեշտ ելունուտ անելու համար, որովհետև գյուղից եկող հեշտ, բայց երկար ճանապարհի մուտքն այդ կողմից է: Բերդի հարավային կողմում, որն արդեն իջվածք է, մեծ դարպասներ էին՝ պահպանված մինչև նախորդ դարի

¹ Խորությունը հասկանալու համար ամեն նորեկ՝ երեխաներից մինչև միջահասակները, քար է մեջը նետում ու ավելորդ քարերի կույտ է երբեմն ստացվում, իսկ ամօրս խնդրելիս, երբ խառնում են ջուրը, բազկաչափ հաստությամբ երկու մետրից ավելի երկարություն ունեցող փայտի ծայրը թողնում են ջրի մեջ. եթե ջուրը երկար ժամանակ կանգուն է մնում, մեջը երբեմն դեղնակարմրավուն մանրէներ են լինում լցված ու մի քանիտակ ծալված մառյայտով քանելիս անգամ, նույնությամբ ջրի հետ անցնում են, բայց խմելուց ոչ մի վնաս չի լինում, աղբյուրի ջրի նման քաղցրահամ է, ու օգոստոսին դեռ սառնորակ. մենք երկու բաժակից ավելի միանգամից ըմպել ենք ու շատ սովորական է եղել:

² Սկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձաններ, եր., 1985, էջ 35:

³ Կապիտանի գլխավորությամբ պատրաստվել են դիմակայելու Քարվաճառի/Քելբեջառի կողմից եկող այրմ-քուրդ-թուրքերին և Չարեքտարի հայերին պաշտպանելու, որոնց մեծ մասը գաղթել էին Ղազախից՝ թույլ չտալու այդ հայերի անասունների հափշտակումը վայրենաբարո նշված քոչվորների կողմից. հետո՝ իբր կոմունիստներին դիմադրելու համար, բայց ոչ մի պայքար, կռիվ տեղի չի ունեցել. թուրքերն, իմանալով հաբերքցիների մտադրությունը մոտակա այլ այրմ-քուրդ-թուրքերի նկատմամբ ու չափարցի Սկրտչյան Բեյլարի մասնակցությունը պաշտպանական այդ գործունեությանը, որի քաջագործություններին լավ ծանոթ էին, միայն բավարարվել են հրացանով գաղտագողի նրան սպանելով. երկու ամիս պատսպարվելով Գակառակաբերդում՝ չարեքտարցիների մի մասը գնում է Սիզդեյկ՝ այնտեղ գաղթած յուրայիններին միանալու (դրա մասին ոչ մի տեղ չի հիշատակվում կամ խեղաթյուրված է ներկայացվում, օր.՝ Դավթյան Կ., Լեռնայի Ղարաբաղի բարբառային քարտեզը, եր., 1966, էջ 275), մի մասն էլ ետ է վերադառնում, բայց խորհրդային կարգերի առաջին տասնամյակում աստիճանաբար ցրվում են՝ զիջելով օտարներին):

⁴ Հրազդեհի պակասի դեպքում նախատեսվում էր քարեր նետել, իսկ դուռը թշնամու կողմից խորտակվելու դեպքում՝ թեթութային դիքթով պայմանավորված՝ քարահոսք լինի ոտիս գլխին:

վերջերը: Ներսից՝ դարպասի առաջ, ինչպես նշեցինք, շատ քար է եղել կիտված՝ որպես ռազմամթերք, և այն մինչև հիմա մնում է կիսահոս վիճակում: Հարավային այդ կողմը՝ դարպասին մոտ տեղանքը, թեք, մացառապատ ու արհեստականորեն դժվարանց է դարձրած, իսկ Հակառակաբերդի դարպասների հարավարևելյան կողմի անմատչելի ժայռի մոտից, լեռան ստով, մինչև Ս. Մինաս, քարակարկառ, մացառապատ տեղանքն էլի դժվարանց է: Դարպասներից քիչ հարավ արևմուտք գոգանման տեղ կա, որը հրապարակ է եղել: Ըստ ավանդության՝ ամենակատաղի ու օրհասական վերջին ճակատամարտերն այդտեղ են եղել¹: Ընդհանրապես ոսոխները միշտ ձգտել են խուսափել Հակառակաբերդի ուղղությամբ ճակատամարտ տալուց, որովհետև նախ՝ դիրքը հարմար չէր հարձակվողների համար, հետո՝ շրջակայքի բոլոր բերդերը հիմնահատակ ավերելուց հետո, հեշտ էր տրտումներ՝ կամ Մանանասարով եղած ճանապարհներով մյուս տեղանքների վրա հարձակվելը, ուստի Հակառակաբերդը կանգուն, բայց շրջափակված էր մնում: Բերդի արևմտյան ժայռանդունդը խաչքարեր, գաղտնարաններ ուներ²:

Հակառակաբերդ ամրոցը՝ Հկռապերթը՝ Պերթն ունի *Բերդ, Չափարի բերդ, Հայկաբերդ, Ղալա, Շարմաղ ըխճկա ճյուրը* և հնագույն *Աստղիկի դիցարան* անվանումները³: **Հակառակաբերդ** բառը բաղկացած է **հակ** ստացվածքային ձևից (այս արմատը հիմա աժանցի արժեք ունի նույն իմաստով՝ *հակառակ*.)⁴, **առ** բնիկ հայերեն կապակցող բաղադրիչից (նախդիր՝ *դեպի* իմաս-

¹ Դարպասի արևմտյան կողմի վիճակները ժայռի վերին պատից հեռահար քարնետություն, նետածգություն, միզակամետություն է եղել, իսկ դավիթբեկյան ժամանակներից սկսած և կոմունիստական հեղափոխությամբ ավարտած՝ եղել է հրետանու փողի համար նախատեսած անցք պատի վերին մասում, որից մեկը մինչև հիմա դեռ մնում է, իսկ հյուսիսային մասի դիտակետի մոտի այդպիսի նպատակների ծառայող մասերից մնացած ոչինչ չկա:

² 1941-45թթ. պատերազմում նահատակված և կնոջ խնամքին վեց աղջիկ ու մի փոքրիկ տղա թողած Սարգսյան Շամիրի դուստր Վարսենիկը, երազում Հակառակաբերդի գանձարանին էր տեղեկացել հետևյալ կերպ. ավագ քույրն արդեն հարսնացու էր, մյուսը զնացել էր սովորելու, ուստի տղամարդու աշխատանքը բաժին էր ընկել իրեն, հատկապես, գերանդի ու կացին բանեցնելը, և ահա Վարսիկը երբեմն երազատանք էր լինում ու հետո պատմում էր իր տեսիլները. Հակառակաբերդի հետ կապված տեսիլը ում պատմել էր, չէին հավատացել, հետո պատմել էր նաև ամուսնուն կուսակցական Վազգեն Ներսեսի Սկրտչյանին, որը ևս չէր հավատացել. Վարսենիկը երազում տեսել էր ծերմակամորուս մի պատկառազրու անձնավորության, որն իբր Վարսիկի ճակատագիրն է պարզել. այն է՝ ապրելու համար կամ փախկան (լարախաղաց, կրկեսի աշխատող, սպորտսմեն, դերասան-Ս. Մ.) պիտի դառնա կամ Հակառակաբերդի ժայռի մոտի խաչքարի գրությունը կարդալով՝ զանձի տեղը իմանա ու վեց տղամարդու հետ չորս օր քանդելով, ջվալով ոսկին՝ սպասքեղեն, գաղղեղեն, դրան, հանի ու հարստանա, բայց այդ գանձն ուրախություն չի բերելու, պիտի խելամտորեն ու պայքարով տեր մնա հարստությանը. ասել ու ծեռքով խաչքարի գրությունն է ցույց տվել, որը թեև Վարսիկի համար սովորական գիր չէր, բայց այդ պատկառազրու մարդու մատի ուղղությամբ պարզ տեսել է ու հասկացել՝ ես գանձին եմ նայում, գանձը՝ ինձ (այդպիսի գրության մասին նաև պատմում են Տրտուի՝ Թարթառի աջափնյա խնդրավանքի/խաթրավանքի/խաղավանքի մասին, բայց առ այսօր դեռ ոչ ոք չի գտել, թեև գտնողն էլ չի ասի, թե գտել է:

³ Այրմ-քուրդ-թուրքերը XX դ. սկզբին Հակառակաբերդին, Չափարին նաև Ի/Ուսաջը էին կոչում՝ Հիսուսի հետք՝ ելնելով գյուղի եկեղեցու Անենափրկիչ անվանումից, որը տարածում չի գտել:

⁴ Աճառյան Գր., Հայերեն արմատական բառարան, վերահր., հ. 3, էջ 11:

տով),¹ *ակն* (աչք բնիկ հայերեն արմատից),² և *բերդ* (ասորական փոխառություն.)³ բաղադրիչներից ու նշանակում է՝ Բերդից աչքի առաջը *տեսնել, հսկել* և *հակառակել՝ դիմակայել* յուրաքանչյուր ոսոխի (ԱԿՆ արմատի պատճառով այս բերդը երբեմն շփոթվում էր Հաթերքից արևելք գտնվող Ականաբերդի հետ): **Հկռապերդը** Հակառակաբերդի արցախյան բարբառային հնչյունափոխված տարբերակն է, իսկ **Պերթը՝** Բերդի: Այդ տեղանքն **Աստղիկ** դիցուհու անունը կրում էր մինչև քրիստոնեությունը, և բնիկ հայկական արմատից է սերվում՝ ԱՍՏՂ, -ԻԿ նվազափաղաքշական ածանցի հետ (այդ անվանը փոխարինած ժողովրդախոսակցական **Շարմաղն** արդեն մեկնաբանված է): **Հայկաբերդը** սերվում է Հայկ Նահապետի անունից և մեկնաբանված է *բերդ* արմատից: Չափարի *բերդ* անվանումը սերվում է գյուղի պարսկահայատակ ժամանակներից ընդունված անունից⁴: Չափարը հայերենի որոշ բարբառներում նաև Ռ-ով է գործածվում՝ Չափառ: Սուկաց բարբառում այն նշանակում է *որսորդի կամ զինվորի դիրք*: Չափարը՝ *ճապիր, ծեպար, չիպոր*, արաբական և եբրայական հրեական, ձևերից է նաև մեկնաբանվում, որը պատմականորեն նշանակում է *հզոր, ահավոր*, ռամկական ժողովրդական ձևով՝ *ցանկապատ*⁵: Չափար/ռ բառը նաև *սուրհանդակ, բանբեր, լրաբեր, թղթատար, փոստատար ու նրանց հանգրվանելու տեղ* իմաստն էր բովանդակում, որը արաբական էր: Այս բոլոր իմաստները համընկնում են Չափարի անվանը և դարեր առաջ (V-X դ.դ.) պարսկահայատակ ժամանակահատվածում, օրինականացվել է պարսկական այդ անունը Բերդ, Քարաբերդ, Հակառակաբերդ, իսկ ժողովրդի համար՝ Պերթ, Հկռապերթ անունների փոխարեն՝ իբր հաստատելով նվաճողների զարմանքի արտահայտությունը տեղանքի ամրության վրա՝ *Այսբան անանցանելի արգելք (չափար) դեռ չի եղել մեր գործի համար՝ Տրտուհի Թարթառի հովտով բարձրանալիս*: Որպեսզի գերիշխողի *աչքը քաղցր լինի իրենց վրա*, տեղացիները նաև պահպանել են իշխողների կողմից տրված տեղանունը, որը XX դ. ռուսական գրագրություններում ստացվում էր *պ-ով կամ ֆ-ով ձև՝ փ-ի բացակայության պատճառով* Չապար՝ Чапар, Չաֆար՝ Чафар: Ազերիները, իրենց արտասանական բազայով պայմանավորված, երբեմն գործածում էին Ձ/Չաֆար անունը, որը էլի պարսկերեն բառ է ու նշանակում է *գրերի միջոցով կատարվող գուշակություն, գրբացություն, իմաստություն, իմացական կարողություն* ⁶: Այդ

¹ Աճառյան Հր., *Հայերեն արմատական բառարան, վերահր.*, հ. 1., էջ 247:

² Նույն տեղը, էջ 106

³ Նույն տեղը, էջ 442

⁴ Չափար բառը ծագում է պարսկերենից և ունի արգելք նշանակությունը՝ ներառյալ պատնեշ, պարիսպ իմաստները . տես՝ Աճառյան Հր., *Հայերեն արմատական բառարան, վերահր.*, հ. 3, էջ 627:

⁵ Ավետիքեան Գ., Միւրմէլյան Խ., Ավգերեան Մ., *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, վերահրտկ.*, հ. I-II, էր., 1979-81, էջ 574:

⁶ Ղազարյան Ռ., Ավետիսյան Գ., *Միջին հայերենի բառարան*, 2 հ. էր., 1987-92, էջ. 294:

իմաստը համընկնում է Չափարի արդի Սիբիրդարայի գերեզմանոցի տեղանքին, որն առաջ Սիբիրյան մատուռ ուներ, ուր այդպիսի աշխատանք էր կատարվում (դրանից հիմա մի խաչքար է մնացած ճանապարհի ոլորանից քիչ վեր՝ ընկուզենու տակ): XX դ. սկզբին այրմ-քուրդ-թուրք-ազերիները ցանկացել էին Ուսաջը՝ *Չիսուսի հետք*, վերանվանել, բայց չի հաջողվել: Գարդման-Գյուլստան երկրում էլ կար նաև Չափար, Չափար դալա (վերջինս Մռովից արևելք հողաբերդ է, Ինջայի աջ վտակի մոտ. այդտեղ կա նաև Ամենափրկիչ եկեղեցի. ինչպես նաև Չարեքտ/դար, Դատ, Կարմիր վանք, Ամենափրկիչ և այլ նույնանուն կառույցներ, որը նաև բնակիչների պատմական տեղաշարժերի պատճառով է ստացվել): Սրանք շփոթության տեղիք էին տալիս ոչ տեղացիներին: Մի քարտեզում էլ Չափարի փոխարեն Չափնի են գրել՝ շփոթելով Սողքի կողմերի համանուն գյուղի հետ:

Ղալա//Ղալե բառը արաբական, պարսկական օտարաբանություն է, որ նշանակում է *բերդ, ամրոց*¹ և գործածվում է միայն խոսակցական լեզվում:

Արցախյան գոյապայքարի ժամանակ Հակառակաբերդի ժայռն ու պարիսպները երբեմն դիտակետ են ծառայել, բայց ընդհանուր պայքարի համար որպես տեղանք չի գործածվել: Ուխտավորներ հիմա հազվագյուտ են Հակառակաբերդում լինում: Նորից ծառեր ու բազմազան բույսեր են աճում բերդի ներսում, ջրամբարի կամարի վրա, կողքի քանդված դիտակետի փոսում ու խարխլում պատերը: Երևանում ապրող Սերյոժա Ռափիհնի Սարգսյանը Գոյապայքարի ժամանակ Հակառակաբերդին նվիրված երգ էր ստեղծել, որը ժողովրդականացել էր: Սրտամորմոք ձայնով գովաբանվում է Բերդի//Ղալայի խրոխտ դիրքը, դիմացկուն լինելը՝ անընդհատ կրկներգելով օտար բառը. *Այ իմ Ղալա, ջան իմ Ղալա, Եղածի մեջ շատ լավ Ղալա*:

Резюме

Местность Акаракаберда Мартакертского района в Арцахе является одним из древних поселений, который одновременно функционировал и как крепость и, как священное место. Данная местность в древности и в более поздние времена называлась по-разному.

В статье все эти названия подвергается этимологическому анализу.

Summary

The locality Akarakaberd in Martakert region of Artsakh is one of the oldest settlements, which also functioned as a fortress and as a sacred place. The area in ancient times and later was named differently. All these names are etymologically analyzed in this article.

¹ Նույն տեղը, էջ 65: